**SIGMA**
**Support for Improvement in Governance and Management**
A joint initiative of the OECD and the European Union, principally financed by the EU

**CIVIL SERVICE COUNCIL OF THE REPUBLIC OF ARMENIA**

# Սեմինար
# Հայաստանի քաղաքացիական ծառայության համակարգի գնահատում թեմայով

Երևան, նոյեմբերի 16, 2010թ.

## Կազմակերպիչներ

- ՀՀ ՔԾԽ
- ՍԻԳՄԱ (www.sigmaweb.org)

## Հիմնական նպատակները

1. Ներկայացնել և քննարկել ՍԻԳՄԱ ծրագրի կողմից իրականացված Հայաստանի քաղծառայության համակարգի գնահատման հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները:
2. Աջակցել քաղծառայության բարեփոխումների ուղղությունները, գերակայությունները և ոլորտները որոշելու խնդրում:
3. Քաղաքացիական ծառայության բարեփոխումների խնդիրը միշտ պահել քաղաքական օրակարգում:

## Հիմնական թեմաներ

- Հանրային ծառայողների իրավական կարգավիճակ
- Քաղծառայության համակարգում պրոֆեսիոնալիզմի գնահատում
- Մարդկային ռեսուրսների կառավարում
- Քաղաքացիական ծառայության համակարգը ղեկավարելու կարողություն

## Հրավիրյալներ

- Բարձրաստիճան ղեկավարներ և քաղաքականություն մշակողներ
- Մարդկային ռեսուրսների կառավարիչներ
- ՔԾԽ աշխատակազմ
- Շահագրգիռ կողմեր

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները ոչ մի կերպ չեն արտացոլում Եվրոպական Միության պաշտոնական տեսակետը, ինչպես նաև պարտադիր չէ, որ դրանք արտացոլեն OECD կազմակերպության և նրա անդամ երկրների կամ SIGMA ծրագրին մասնակցող երկրների տեսակետները:

# Ծրագիր

| | |
|---|---|
| 09:30 – 10:00 | Գրանցում |
| 10:00 – 10:30 | **Բացման խոսք**<br><br>Մանվել Բաղդալյան, ՀՀ ՔԾԽ նախագահ<br><br>Գուգլիելմո Կոլոմբո, ԵՄ պատվիրակություն<br>Ջուլիո Նաքահիս, ՏՀԶԿ(OECD)/ ՍԻԳՄԱ |
| 10:30 – 11:15 | «SIGMA ծրագրի կողմից կատարված գնահատման հիմնական եզրակացություններ»<br>Ջուլիո Նաքահիս, ՏՀԶԿ / ՍԻԳՄԱ<br><br>Քննարկում |
| 11:15 | *Սուրճի ընդմիջում* |
| 11:45 – 12:30 | «Քաղծառայողների իրավական կարգավիճակը. իրավական դաշտ, սահմանում, շրջանակ և սկզբունքներ»<br>Ադոլֆո  Սանչես, ՍԻԳՄԱ ծրագրի փորձագետ<br><br>Քննարկում |
| 12:30 | *Ճաշի ընդմիջում* |
| 14:00 – 15:45 | «Քաղաքացիական ծառայության պրոֆեսիոնալիզմ»<br>1. Ընտրություն, համալրում, առաջխաղացում, մոբիլություն և վերապատրաստում<br>Ջուլիո Նաքահիս, ՏՀԶԿ / ՍԻԳՄԱ  աշխատակազմ<br><br>2. Դասակարգում, իրավունքներ և պարտավորություններ<br>Ադոլֆո  Սանչես, ՍԻԳՄԱ ծրագրի փորձագետ<br><br>3. Չեզոքություն, հաշվետվություն, կարգապահություն և ազնվություն<br>Ռիչարդ Մարտինես, ՍԻԳՄԱ ծրագրի աշխատակազմ<br><br>4. Աշխատավարձի համակարգ և կատարողականի գնահատում<br>Հենրիխ  Թրամյուլեր<br><br>Քննարկում |
| 15:45 | *Սուրճի ընդմիջում* |
| 16:15 – 16:45 | «Քաղաքացիական ծառայության համակարգի ղեկավարում»<br>Ջուլիո Նաքահիս, ՏՀԶԿ / ՍԻԳՄԱ ծրագրի աշխատակազմ<br><br>Քննարկում |
| 16:45 – 17:30 | «Հայաստանի քաղաքացիական ծառայության համակարգի գնահատում. դիտողություններ և  առաջ շարժվելու ուղիներ»<br>Գեղամ Սարգսյան, ՀՀ ՔԾԽ |
| 17:30 | Ամփոփում |

Զեկուցողների հակիրճ կենսագրական

Մանվել ԲԱԴԱԼՅԱՆ

Մ. Բադալյանը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահն է: Եղել է ՀՀ Ազգային Ժողովի իրավական հարցերով հանձնաժողովի նախագահի տեղակալ: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու է, դասախոս: Մ. Բադալյանը նաեւ Պետական Ագրարային Համալսարանի խորհրդի նախագահն է:

Ջուլիո ՆԱԲԱԻՍ

Պարոն Նաբաիսը ՍԻԳՄԱ-ի քաղաքացիական ծառայության բարեփոխումների, վարչական իրավունքի, վարչական բարեփոխումների եւ ազնվության հարցերով ավագ խորհրդատու է: ՍԻԳՄԱ ծրագրին միանալուց առաջ պարոն Նաբաիսը Պորտուգալիայի Պառլամենտի գլխավոր քարտուղարի տեղակալն էր եւ հանրային կառավարման դեպարտամենտի գլխավոր տնօրենը: Ավարտել է Լիսաբոնի համալսարանը՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

Ռիչարդ ՄԱՐՏԻՆԵՍ

Պարոն Մարտինեսը քաղաքացիական ծառայության բարեփոխումների, վարչական իրավունքի, վարչական բարեփոխումների եւ ազնվության հարցերով ՍԻԳՄԱ ծրագրի ավագ խորհրդատու է: ՍԻԳՄԱ-ին միանալուց առաջ, պարոն Մարտինեսը, որն ազգությամբ ֆրանսիացի է, եղել է կոռուպցիայի կանխարգելման կենտրոնական ծառայության խորհրդական, Գյուղատնտեսության եւ գյուղական կյանքի հիմնադրամի գլխավոր քարտուղար, վարչական հարցերով դատավոր, կրթության նախարարությունում բաժնի պետ եւ Էկոնոմիկայի նախարարության միջազգային տնտեսական հարաբերությունների վարչության պետ: Ունի քաղաքագիտության դիպլոմ, իրավագետի որակավորում, ինչպես նաեւ Կառավարման Ազգային Դպրոցի /ENA/ դիպլոմ:

Հենրիխ ԹՐԱՄՅՈՒԼԵՐ

Պարոն Թրամյուլերը Ավստրիայի Ֆինանսների նախարարությունում խորհրդական է: Նախկինում եղել է նույն նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ, ինչպես նաեւ Ֆինանսական շուկան կարգավորող մարմնի խորհրդի անդամ: Ավարտել է Գրազի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

Գեղամ ՍԱՐԳՍՅԱՆ

Պարոն Սարգսյանը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի գիտակրթական վարչության պետն է: Նա նաեւ ՍԻԳՄԱ, Թաեքս եւ Թվինինգ ծրագրերի պատասխանատուն է: Պարոն Սարգսյանը քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ազգային համակարգողն է: Պատմական գիտությունների թեկնածու է: ԵՊՀ «հանրային կառավարում» ամբիոնի դասախոս: